Արձանագրություն N 3
ՀՀ-ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-(18/1-Լ) ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 12 դեկտեմբերի 2018թ.
ժամը 11:00

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Ն. Մնոյանը
անդամներ՝ Դ. Շատվերյանը, Ա. Եղիազարյանը
քարտուղար՝ Լ. Հարությունյանը
Բացակայում էին հանձնաժողովի անդամներ Ա. Վարդանյանը, Ա. Կանդանովը

I. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների մասին

(Ն. Մնոյան)

1. Հրավերով սահմանված ժամկետում «ՅԴԿԱԴ» ՍՊԸ-ն ներկայացրել է հրավերով պահանջվող փաստաթղթերը:

2. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց ներկայացված փաստաթղթերը՝ աշխատանքի կատարման համար հրավերով պահանջված հավելված 5-ը, 5.1-ը և 5.2-ը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված դրական եզրակացությունը և գնահատման արդյունքում՝ հանձնաժողովը արձանագրեց, որ մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անճշտություններ, մասնավորապես Հավելված 5.2-ում՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկանքում գործատուի անվանումը տարբերվում է մասնակցի անվանումից, առկա է միայն մասնագետի համաձայնությունը, որը թերի է առանց աշխատանքային պայմանագրի:

3. Հիմք ընդունելով հանձնաժողովը անդամների կողմից իրականացրած գնահատումը հանձանաժողովը որոշեց.

ա/ Մեկ աշխատանքային օրով կասեցնել հանձնաժողովի նիստը և առաջարկել «ՅԴԿԱԴ» ՍՊԸ-ին՝ մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4. Բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի լրացուցիչ ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը հայտնաբերեց անհամապատասխանություն «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկում /առաջին և երկրորդ սյունակներում ներկայացված գնային առաջարկների հանրագումարը ոչ տառերով, ոչ թվերով չի համապատասխանում ընդհանուր գնի սյունակում նշված գնի տառերով և թվերով կամ միայն տառերով գրվածին/ և որոշեց, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետը, մերժել տվյալ հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Ն. Մնոյան

անդամներ՝

_____ Դ. Շատվերյան

_____ Ա. Եղիազարյան

քարտուղար՝ _____ Լ. Հարությունյան